ինչպես կրիան իր կեդիկ մեջ: «Նա սպեկոծված է գարնան ջրերի պես»: «Հայ ժողովուրդը կանգուն է, ինչպես իր հայրենի լեռները, հպարտ ու բարձր որպես այդ լեռների արծիվները»: Հայտնապ պատկերավորությամբ է խոսում Շեքսպիրի Օթելլոն: Այդ սեռածորթ մարդի համար՝ «Ամպիկներով ծածկված երկինքը մարմարիտն է, Գեզդեմոնայի մաշկը սպիտակ է որպես ձյուն, ողորկ որպես մահարձանների պարասոր: Բնած Գեզդեմոնան— կենդանի վարդ է, Գեզդեմոնայի սպանուրջունը— արևի և յուսնի խավարում»: Իր մասին Օթելլոն ասում է, որ ինքը «որպես նվառ մի հնդիկ իր ձեռքով դեմ նետեց շոյ մարգարիտը, մի մարդ, որի նվազած աչքերն ավելի առատ արցունք են քսում, քան արարեալան ծառերը իրենց բուծական խեղճը»:

Տրուպներ— Հոեուորն, ինչպես և պետք խոսքի մեջ համար բառերն և Հասկացողությունները դործ են անում փոխարեկան խոստով, այնպես որ ավրայ բառը կամ պատկերը արտահայտեն ուրիշ բառերի խոստ՝ նրանց մեջև եղած որոշ կապակցության հիման վրա: Ոճական այս պրիոմը կոչվում է տրուպ: Տրուպի տեսակներն են. մետաֆորա, մետաղիմա, սինեկդոփա, ակեգորիա:

Մետաֆորա (փոխարեկություն)— Հոեուորն մի առարկայի հասկացությունը փոխադրում է մյուս առարկայի վրա, նրանց մեջև դոյություն ունեցող որոշ նմանության հիման վրա: Այսպես՝ փոխարեկի ազմուկը նման է զալյի ունեցին, ուստի և ասում են. փոխարեկը ոռնում է: Կան փոխարեկության զանազան տեսակներ. բայ— փոխարեկություն, հասկացություն— փոխարեկություն, դոյական— փոխարեկություն և այլն: Ահա օրինակներ. Լուսինն իր դեմքը ծածկում է յանպիլի կեռեր, բացի լեզուները վեր են բարձրանում: Հեռեյալ արտահայտությունները՝ ծանր արամադրություն, բացավառ սիրտ, երկարյա ներվեր, հիմար դրուրյուն, մեղմ ժպիտ, պարզ միտք, մաքր գարծեր, գործունեություն դաշտ, դատարկ գլուխ և այլն և՛ փոխարեկություններ են, և՛ էպիտետներ:

Մետաղիմա (փոխանվանություն).— Բառերի հասկացությունները արտահայտվում են, երբ նրանք արտահայտում են հարակից, սերտ կապ ունեցող երևույթներ: Այստեղ առարկայի արտաբերի կողմից փոխարեկում է նրա ներքինին, պարունակողը պարունակելին (օրինակ, «ես իրեք արտե կերպ»), Հեղինակը

փոխարինում է Երկին («Ինստուկտի եմ կարդում»), — կամ՝ «ամբողջ ֆաղափը ոտքի ելավ» և այլն:

Միևեկդոփա. — Գանակական փոխանվանություն, Երբ վասը փոխարինում է ամբողջին («է՛յ, մորսւ՛մ», «գործարանում չի կերի՞նում բանվորական ձեռք», «գերմանացին կրեշավար գազանուքչառններ է անում», «բշկամիին դաման է» և այլն): Այս բոլոր դեպքերում մասը փոխարինում է ամբողջին (մորսւքը փոխարինում է տրոջը, ձեռքերը՝ բանվորներին, գերմանացին՝ դերմանացիներին, թշնամին՝ թշնամիներին): Հաճախ եղակիք փոխարեն հոգնակի ենք զործածում. օրինակ, «Շեֆայիրներ և Տոլստոյներ համախ չէ, որ երևան են գալիս»:

Ակցորիա (այլբարանություն). — Ոճական մի պրիտ է, երբ փոխարերական իմաստով զործ է անվում ոչ թե մի բառ, կամ հասկացողություն, այլ ամբողջ նախադասություն, կամ նույնիսկ մի ամբողջ երկ: Առակները՝ զերբազանցօրեն այլբարանական իմաստ ունեն:

## VI

Ֆիգուրաներ. — Հեռուորական արվեստի սճական պրիտների շտախագանց կարեւոր մասը կազմում են այսպես կոչված Ֆիգուրաները, այսինքն արտահայտման այնպիսի ձևեր, որոնք վաս և ուժեղ են դարձնում միաքը և զգացմունքները: Տրոյները ստեղծադործական ուժ ունեն, նրանց շնորհիվ հեռուորը ստեղծում է մտքեր և խորացնում զրանք: Իսկ Ֆիգուրաները միայն արտահայտում են պատրաստի մտքերը և գննազան արամադրություններ: Սակայն Ֆիգուրաները նույնչափ շատ կարեւոր են, որչափ և արտոյները: Ֆիգուրաները բազմապիսի և բազմաթիվ են. Ֆիգուրաներ են՝ նարտասանական հարցը, հեռուորական քացականչուքչուրը, անտիքեզը, պարապելիզմը, անափորան, գրադացիան, իրակամի, դիպոզը, դրամատիկացիան և այլն:

Հարտասանական հարց. — Այս սճական պրիտի ժամանակ հեռուորը հարց է դնում, որի պատասխանը չի սպասում, այլ ինքն է տալիս, կամ այդ պատասխանը ռեզոլակի պարունակվում է հենց հարցի մեջ: Ծարտասանական հարցը դրական մտքի հարցականն ձևն է: Այս ձևը ընդամուծվյուն է տալիս հեռուորի խոսքին, ափելի ցարտուն է դրանորում հակադիր կարծիքները, ափելի կատեգորիկ է ընդդճում՝ հեռուորի թեզը: Հեռուորի հարցական

ինտանցիան մատչելի է գարձնում միտքը: Այս պրիոմը չափազանց լայնորեն դժգոհագրվել է և դարձադրվում է ամենաչափանի հետադրմանը կողմից: Հին հունական հետադր Դեմոսթենը մակիդոնական կայսեր Ֆիլիպպի դեմ ուղղած հայրենասիրական իր ճառն ամբողջական կատուցում է հարցի ձևով:

Ճարտասանական հարցի ձևը կրասիկ կերպով օդադործում է հուշակամոր Յիցերոնը: Դավադիր կատալիսոսի դեմ սենատում արտասանած Յիցերոնի սուաշին ճառում ասված է.

«Մինչև և՛ բր պիտի վերջնական շարաշահես մեր համբերատարությունը, կատալիսոս: Դեռ չա՞ն պիտի ծաղրի ենթարկես մեզ քո խելահեղ մեքենայություններով: Ե՛րբ պիտի վերջնական դադարես ամբարտաճանալ քո սանձարձակ պրիոմից»:

«Չապակ» կինոֆիլմի մեջ Չապակը հանդես գալով դիվիզիայի սուաջ՝ ճառ է ասում, գատապարտելով անկարգապահ զինվորներին. «Մե՛թե դրա համար է տարածվել մեր դիվիզիայի համբավը»: Հոյակապ կերպով օդադործում է հետադրական հարցի պրիոմը սովետական գրող սուալինյան ըսուրեսա էրենբուրգը. դիմելով Ֆաշիստ ամադակների պարադուխտ Հիպիերին, իր մի հոգովածում նա դրում է.

«Դու խոսում ես եմբողջաչե շնոր կարգի» մասին: Հարցրու, թե ի՞նչ են մտածում քո մասին ֆրանսիացիները և լեհերը, նորվեգները և սերբերը: Քեզ ասում են ամենուրեք: Դու այդ անմանում ես «սոցիալիզմ»: Տրամբ, դու կրկնում ես ուրիշի սուտը: Դու դիպեկեպիկ մողովուրդ էիր: Դու գարձար սոյգաթ-թուխակ»:

Ոճական այս պրիոմը բարձիցս օդադործում է Անիեր:

«Որտեղ և և՛ բր է տեսված, որ Չարդերն ու անարխիսն իւրայի միջոցատումներ լինեն»:

Ճարտասանական հարցին շատ մոտ է հոետորակախ բացականչուքյունը: Բացականչությունն արվում է խոսքի մեջտեղ, ինչպես և վերջում: Բացականչությունը հաճախ ընդունում է գիմուսի, յուրուղի ձև: Հետադրական բացականչության կրասիկ նմուշը նույն Յիցերոնի մոտ կեր կարդում: Հունական բաղաբացու մահապատժի վերաբերյալ իր ճառում Յիցերոնն ասում է.

«Օ՛, աղատութիան բազր սունն: Օ՛, մեր քաղաքացիության հետ կապված բացառիկ իրափումը... Օ՛, արխիուսի իշխանություն, որին աշնպես ուժեղ ձգտում էր

Հումի պլեբար և որք վերջնացես վերադարձրին նրան :  
Մի՛թե աչք բուրն աչքան է հեա դնացել, որ կաշկանդ-  
ված Հումեական շաղաքացուն Հումեական ժողովրդի  
պրովինցիայում, միտի՞ենական քաղաքի հրապարակում  
մեծկում է նա, ով իր Ֆասցաներով<sup>\*)</sup>, սակերով պարաս-  
կան է եղել Հումեական ժողովրդի բարեբարութիւնը :  
Նույն Յիցերոնք ալ պրիոմք օգտագործում է նաև կոտիլի-  
նայի դեմ :

«Պալատներ պաշտպանվում է զիշերային պահակա-  
խմբի կողմից, քաղաքում կանդնած են ժամապահները,  
Ժողովուրդը սաղնայի մեջ է, բայց իրենց հայրենիք սի-  
բոզները համարվել են խորհրդի, սենատը նրանք է ու-  
նենում ամենամտքացած մասում . այստեղ ներկա եղողնե-  
րի դեմքերը ցատում են արասհայտում . . . մի՛թե աչք բու-  
րնը չի աղլել քեզ վրա . . . օ՛, ժամանակներ, օ՛, բար-  
բե՛ր» :

Բայր հեկտորներ ժոտ էլ կարելի է սենել Հարասանա-  
կան հարցի և հեկտորական քացականութեան համակցումք :

Անտիլեզ — Այստեղ հեկտորը իրար հակադրում է երկու  
մեկը մյուսին խիտ հակասող մտքեր (բարի և չար, լույս և խա-  
վար, քաջ և վախկոտ, կուլտուրա և բարբարություն, դեմո-  
կրատիա և սենտր, հազիմակ ու պարսություն) և այլն : Ան-  
տիլեզը խոսքին ուժեղ արտահայտութեան է առիտ . դա հե-  
տորական պրիկտի, ինչպես և պոեզիայի ոճական ամենակա-  
րևոր և ուժեղ միջոցներից մեկն է, որը լայնորեն օգտագործ-  
վում է բայր հեկտորները կողմից : Անտիլեզի երկու հակադրի  
կողմերը փոխադարձորեն լուսարանում են միմյանց : Անտիլեզի  
հոյակապ նմուշ էլի կարգում ենք Յիցերոնի ժոտ Այսպես, նա  
ստում է .

«Երբ ամեն ինչ հանդիսա է, դու սղմկում ես, երբ բայրը  
հուզվում են, դու հանդիսա ես, անտարբեր դարձում—սաքանում  
ես, հուզող հարցերում — ստան ես . երբ պետք է լսել — դու  
բղավում ես, երբ պետք է խոսել — լսում ես . . . » և այլն :

Պեղեցիկ կերպով օգտագործում է անտիլեզի պրիոմք էրեն-  
բուրդը, մերկացնելով ալազակ Հիսլերին . էրենբուրդը դրում է .

\*) Փասցա—չիվերի փունջ, հին Հումում սղմենիստրատիվ էշխանու-  
թեան սիմվոլ :

«Մի նայիր, թե ինչ էիր դու և ինչ դարձար: Դու  
Կանախ և Գյտթեի, Մարքոսի և Հայնեի ժողովուրդն էիր:  
Դու դարձար շույլեր Գերբելտի, բանդիտ Գյոբինդի, սու-  
տենյոս Հորատ Վեսսելի սուղտար: Դու ծրարան աշխատա-  
վոր էիր և իրիխտոս: Դու դարձար թափառաշրջիկ և  
ճարդասպան»:

Մեր ազիտասորները հաճախ դործ են անում այսպիսի ան-  
տիթեղներ. «Մեր ժողովուրդների և պարտիայի պատմութձյունը  
անսահման հերոսութձյուններն պատմութձյուն է, հարձակումների  
և նահանջների, ծանր պարտութձյունների ու հոյակապ հաղթա-  
նակների պատմութձյուն է»:

Ընկեր Սաալինը անտիթեղի միջոցով մերկացրեց հիպերյան  
չայկայի ամբողջ գեմապոլիան և ամապակային էութձյունը: Ըն-  
կեր Սաալինը զույց ափեց, որ հիպերականների պարտիայի  
«նացիոնալիզմը» ամենադեղատիչ, ամենաավազակային իմպերիա-  
լիզմն է, իսկ հիպերականներն «սոցիալիզմը» միջնադարյան սեփ-  
հարյուրակային ջարդարարուքյուն է:

Պարալիլիզմ.— Մարդու և բնութձյան երևույթների համեմա-  
տութձյուն: Ռոբեսպիերն ասում է. «Նրա (ճարդու) տանարք  
տեղերքն է, նրա պաշտամունքը.— բարեպարմութձյունը, նրա  
տանը— հրձմանքը»:

Պարաբլիզմի հոյակապ պատկերներ կան Շեքսպիրի մոտ:  
Համլետն ասում է Ռոզենդերանցին և Գիլգենշտեռնին.

«Ինչ հրաշակերտ է ճարդը. որչափ սպիտիկ է նրա  
դատազութձյունը, որչափ անսահման են նրա ընդունակու-  
թձյունները. կողմփածքը և շարժումը որչափ բարձե և  
հիանալի, կայ ու նիստով կարձես մի հրեշտակ. խոհա-  
կանութձյամբ, կարձես մի աստված. աշխարհի գեղեցիկու-  
թձյունը, կենդանիների կատարելատիպը. այլ բոլորով  
հանդերձ՝ ի՞նչ է իմ աչքին հողի աչք գերապուշն զավաճ-  
քը. ճարդը չի հիացնում ինձ»:

Անափորս (կրկնութձյուն).— Պրիմներից մեկն է, որը  
ուժեղացնում է ապափորութձյունը բաների կամ Ֆրագների կրկ-  
նութձյան միջոցով: Այսպես Դանտոնն ասում է.

«Նս չեմ ուզում լինել «պետական ճարդկանց» ամբո-  
խում, որոնք չգիտեն, որ թաղափորներին զլխից պետք  
է փնասել, որոնք չգիտեն, որ Ֆրանսիան Եվրոպայից ո-

չինչ չպիտի սպասի և սկսաք է հույսը դնի միայն սեփական զենքի վրա»:

Երբեմն անաֆորան ընդգրկում է նախադասութիւնների մի ամբողջ սխառեմ, կրկնօլորով միայն առաջին սկզբնական բառերի մէջ:

«Միայն նրան հաջողվեց, — ասում է Լենինը Սվեբլուփի մասին, — իր մեջ միացնել պրոլետարական շարժման զեկափարների կողմի դարձմանայի գիտեհայր... միայն նրան հաջողվեց այնպիսի գրութիւն նվաճել, որ բախական էր նրա մի բարք և առանց խորհրդակցութիւնների, առանց որեէ ձեւական քփեարկութիւնների հարցը որոշվում էր մեկընդմիջա»:

Ռորեպիերի մոտ Փրազների մի երկար շարք սկսվում է կրկնութիւններով.

«Թող նրանք բոլորը ձգտեն... Թող նրանց հիշատակը... Թող նրանք իրենց ինտերեսը կորզեն... Թող նրանք զարգարեն... Թող նրանք բոլորը սոնտիփրեն...» և այլն:

Երբեմն կրկնվում են նախադասութիւն միայն միասեռ անդամները: Հաճախ միեռնային միաքը կրկնվում է մոտ իմաստ ունեցող բառերով: Գրանով հոեաորը մեխի նման իր հիմնական միաքը մացնում է աուդիտորիայի գլուխը: Այսպես, սկզբեմիկ Օրբեյին Անդրիովիասյան ժողովուրդների միաինդում մի շարք նախադասութիւններ սկսում է «Թող»-ով.

«Նի Թող ձեր կուրծքն ամուր լինի, ինչպես հայրենի լեռների ու կիրճերի ժայտերը: Թող թշնամու դեմ ձեր գրոհը իր ճանապարհին ջնջի ու ոչնչացնի ամեն ինչ... Թող ձեր սրբնթաց գրոհը հասնի թշնամիներէ հետեից և ջնջի, հողմացրի՛վ անի նրանց բոլորին մինչև վերջինը»: «Պրովուպի» սաաջնորդներում բազմիցս կարդում ենք այսպիսի անաֆորաներ.

«Թշնամուն ջարջարիլու համար, դերձմանա-Փաշխատական դավթիչների դեմ հողթնամուկ ասնելու համար... Թող գործուն լինի ալդ ասելութիւնը: Թող դա կյանքի կոչի՝ ճակատայիններին օղնութիւն ցույց տալու նոր լիարժեք էփեկտիվ ձեեր... Ամբողջ ամենահարուստ արսնեայր, մարտական փորձի ամբողջ դանձարանը, սնցյալի և հերոսական ներկայի ամբողջ արագիցիան արիւթիւնը

Հարկավոր է բարձր պահել, հասցնել մարտիկների, ամբողջ սոցիալական ժողովրդի դիտակցութեանը<sup>\*)</sup> :

Գրադպցիա. — Մի պրիտ է, երբ հետադարձ իր միտքը կրկնելով շարունակ ուժեղացնող պատկերներով կամ հասկացողութեաններով, ավելի համոզիչ է դարձնում այն : Այսպես էրդ Ջորջը 1915 թվին ՄԵԾ Բրիտանիայի սմխահասաների կոնֆերանսում արտասանած իր ճառում, զործադրում է միաժամանակ և՛ անաֆորա, և՛ դրադպցիա .

«Ես տեսել եմ սմխահասան աշխատելիս, և ոչ ոք նրանից լավ չի աշխատում : Ես տեսել եմ նրան իրրե քաղաքական գործիչ, և նրանից ավելի զգաստ ոչ ոք չկա : Ես լսել եմ, թե ինչպես է նա երգել—ուչ ոք չի երգում ամբողջ դուրեկան, քան թե նա : Ես տեսել եմ նրան ֆուտբոլ խաղալիս և այն ժամանակ նա սարսափելի է : Ես տեսել եմ նրան զործադուլ անելիս... և այն ժամանակ զմիտք է նրա հախից դուր... Այժմ կառավարութեանը կոչ է անում սմխահասաններին, որպես բարեկամի, — որպես իր բարեկամի, աղբի բարեկամի, աշխարհի բոլոր երկրների սպասաւթյան բարեկամի :

Դանտանը ժողովրդի սեռայտիկ սեռականութեան ուժեղացումը միապետութեան դեմ աշուղտի պրիտներով է բնդդում :

«Ձե՞ որ ոչ մի դահ չի դիմանա ժողովրդական ալիքների ճնշումին, ալիքներ, որ ծառս—ծառս են լինում մայրաքաղաքում աշտօր, վաղը, միշտ» :

Մեր մամուլը հայրենական պատերազմի օրերին հաճախ է զործադրում դրադպցիաներ : Օրինակ գրադպցիայի մի նմուշ կարելի է համարել հետևյալ պարբերութեանը .

«Անցած ամիսների բնթացում կարծիր Բանակը դիմադրեց զազգազած թշնամուն, խառնակ նրա սլանները, հակահարված ավից, ջախջախեց նրա շատ զիվիլյաններ, կոպուսներ» :

Այստեղ զնալով միտքն ուժեղանում է :

Իրոնիա (Հեղինակ) — Պոեզիայի և հետադարձան արվեստի շարժանց կարեւոր և անշտի լայն կերպով օգտագործվող պրիտ : Հետադարձ մի բան համակցելով մյուսին՝ միանգամայն հակառակ խնայում է ապիս բասին : Իրոնիայի մեջ հետադարձ

<sup>\*)</sup> Բոլոր պարբերութեաններն էլ վերցրել ենք «Պրադգայի» տոաջ նորոգներից :

Հեղձական մերարեբմունք ունի զկալի բնութագրովոյ Հարցը : Այսպէս, օրինակ, Կոխլաֆի առակներէց մեկում աղջիկան Հարցնում է Էշին. « Բառեղ Էս, խեղճ, թրև գալիս : Խեղճ բառն աշտակ իմաստ ունի, աշխինքն հիմար բառի իմաստը : Իրոնիսմը, յուժարը Հետարական ճառի զեղեցկություններէց են : Իրոնիան սուր զենք է, որ Հնարափորության է ապիս ծիծաղ ստաջացնել ապիտարիայի մեջ. ապիտարիայի անկեղծ ծիծաղը Հետարի Հաղթանակն է : Իրոնիան յայնսրեն օգտադարձում է Մարքսի, Լենինի, Ստալինի կողմից : Այսպէս, օրինակ, Մարքսը «Կապիտալում» Հեղձում է սեռեցիտն անասուկաներին, որոնք Հայտարարում էին թէ ապրանքա-կապիտալիստական Հասարակության մեջ չուկայում բանմորները կապիտալիստներն չափ ազատ են և Հաճառար : Մարքսը Հեղձելով այդ միտքը, «Կապիտալի» I Հատարում ապիս է Հետեյալ հստակափոք պատկերը.

«Այստեղ իշխում է միտիայն ազատությունը, Հաճառարությունը, սեփականությունն ու Բենեֆարը : Ազատությունը : Արտվհետե մի ապրանքի, օրինակ, աշխատութի, գնորդն ու վաճառորդը վարձում են միմյանց Հետ իրենց ազատ կամքով... Հաճառարությունը : Արտվհետե նրանք միմյանց Հարարեբում են լոկ իբրև ապրանքատերեր և Համարժեքը փոխանակում են Համարժեքի Հետ : Սեփականությունը : Արտվհետե ամեն մեկը անօրինում է իրեն պատկանածը միայն» :

Պարզ է, որ այստեղ Մարքսը Հեղձում է շարտարական ու Հաճառարական դադափարներն սեռայ շինելը և զույց է ապիս, որ չուկայից դուրս գալով իսկույն երևում է, որ բանմորը վաճառելով յուր ուժը ձեռնարկատիրոջը, նրա ստրուկն է դառնում : Մարքսը գրում է.

«Նրբ մենք Հրածեշտ ենք ապիս Հասարակ շրջանառության կամ ապրանքափոխանակության այս սլորտին... այս երևում է, որ մի փոքր արդեն սկսել են փոխվել մեր զորքով անձերի Փիզիոնոմիաները : Նախելին դրամատերը մեծարքայ ընթանում է ստջեկից իբրև կապիտալիստ. նրա Հետեից գնում է աշխատութի տերն իբրև նրա բանմոր. մեկը բարձունչանակ կերպով ժպտում է և աշխուժ գործի կոչելու ցանկությամբ, մյուսը խեղճացած քորշ է գալիս սուր կախ զցելով, ինչպէս մի մարդ, որը յուր սե-

փական կաշին է հանել շուկա և հիմա ուրիշ ոչինչ չունի սպասելիք, բացի մի բանից, որ այդ կաշին քերթելու են» :  
Լենինը հակառակորդի խոսքերն իրոնիկ ձևով չափերանների մեջ է առնում, բացահայտելով նրանց ներքին դատարկութունը, կամ ավելացնում է դե (дескать) բառը : Մարտնչելով Մի-խաչոփսիու դեմ, Լենինը նրա այն կարծիքին, թե սոցիալիստի խնդիրն է ամեն տեղից վերցնել լավը և դեն ձգել վատը, Լենինն ասում է .

«Շվ իրոք, էլ խոսելու բան չի մնում . ամեն տեղից վերցնել լավը, և ամեն ինչ հոյակապ է» :

Դիալոգ .— Հռետորը գրույցի ձևով ասեա դիմելով անտեսանելի հակառակորդին, կամ իր համակրողին, կամ ինքն իր հետ, դնում է հարցեր և պատասխանում : Դիալոգի գեղեցիկ նմուշներ գտնում ենք Ցիցերոնի մոտ : Դիալոգ պիտմն օգտագործում են բոլոր հռետորները :

Գրամատիկացիա .— Հռետորն իր խոսքն ընդհատում է, դիմելով յուրյանին մի շարք հարցերով ու ստիպելով նրանց մտածել, հետևութուններ անել և պատասխաններ տալ : Հաճախ հռետորն իր խոսքի մեջ մտցնում է էպիգրո, գործողութուն, հարցողելով խոսքին շարժողութուն : Այսպես, Գանտսնե ասում է .

«Թող ձեր կամխարները անհապաղ ճանապարհ ընկնեն հենց այս դիշեր, թող նրանք ասեն այդ ստոր դասակարգին, թող ասեն հարուստներին . ձեր հարստութունները պետք է դնան հայրենիքի օգտին, ինչպես դնում է մեր աշխատանքը . ժողովուրդը միայն արշուն ունի—նա ծախսում է սրդ, իսկ դուք, ադան վախճաններ, դոհարերեցեք ձեր հարստութունները» :

Մի նմուշ Լենինից :

«Մենք պետք է ասենք . «Յանկան»-ում եք դուք գեղի հետ դնալ, ուստափրացիայի ենթարկել մասնափոր սեփականութունը և սպաս առևտուրն ամբողջովին, —այն մասնակ նշանակում է դյուրիւ կալիֆամասերերի և կապիտալիստների իշխանության տակ անխուսափելիորեն և անպայմանորեն» :

Բարձրագան են և բարձրաթիվ հետադարձան սճի պրիոմները :  
 Հայտնի հետադրները հաճախ շատ պրիոմներ զործադրում են  
 միևնույն ելույթի մեջ : Այսպես՝ Կատարյանայի դեմ Յիցերոնի  
 հռչակագրի ճառերում և՛ ճարտասանական հարց կա, և՛ անտիթեզ,  
 և՛ բացահանչութուն, և՛ անաֆորա, զբաղայցյալ, իրոնիա ու այլ  
 ֆիգուրաներ : Մեր ազխատորը պետք է տիրապետի դրանց, օգ-  
 տագործի : Անհրաժեշտ է իմանալ դեղարվեստական դրականու-  
 թյան անմահ տիպերը, դիտենալ միֆոլոգիան, առակները, իմա-  
 նալ մեր ժողովուրդների արագեցեաները, ֆոլկլորը և օգտագոր-  
 ծել այդ բոլոր ձևերը :

Համալիարհական դրականությունը ամէլ է բարձրաթիվ տի-  
 պեր, որոնք օչնում են մեզ ցայտուն կերպով արտահայտելու  
 մեր մտքերը, դիպուկ դարձնելու մեր ազխացեան, մերկացնե-  
 լու Ֆաշիստ ամազակների սուտը, կեղծիքը, պատմության Ֆար-  
 սիֆիկացեան : Այսպես, օրինակ, հակաֆաշիստական զբող Լիոն  
 Ֆելիստամուդերն իր «Օպինհայմի բնասնիքը» վեպում սրտկերա-  
 վոր կերպով մերկացնում է Ֆաշիստների կեղծիքը :

«Սուա էին նրանց խոսքերը, և սուա՝ նրանց լու-  
 թյունը : Ստով նրանք վեր էին կենում, ստով նրանք պատ-  
 հում էին : Նրանց ամբողջ կարգը սուա էր, սուա էին  
 նրանց օրենքները, սուա էին նրանց դատավճիտները, սուա  
 էր նրանց գերմաներենը, գիտությունը, իրավունքը, հա-  
 վասը, սուա էր նրանց նացիոնալիզմը և «սոցիալիզմը» :  
 Սուա էր նրանց մորալն ու սերը : Ամեն ինչ սուա էր : Եւ  
 մի բան միայն ճիշտ էր — նրանց մարդատյացությունը» :

Համերոտի, Սերվանտեսի, Դանտեի, Շեքսպիրի, Բայրոնի,  
 Մոլիերի, Գյոթեի, Գրեյթի, Պոլսեյի, Պոլսեյի, Դոստոյևսկու,  
 Շեկսպիրի, Տոլստոյի, Գոգոլի, Չեխովի, Գորևու, Մալախով-  
 սկու կերտած տիպերը հարստություն են տալիս մեզ արտա-  
 հայտիչ ու դունեղ, դիպուկ և հարվածող զարձնել մեր ազխա-  
 ցեան : Հայտնի է, թե ինչպես դիպուկ են օգտագործում Լենինը  
 և Մոսկովնը սուա դրականության տիպերը, միֆոլոգիայի օբբադ-  
 ները (հիշենք Անիէյի միֆի օգտագործումը ընկեր Մոսկովնի  
 կողմից) : Ունտեր-Պրիշիբեյնով, փուսլյարով մարդ, պոմպա-  
 դուրներ, մանիլովշչինա, մեր վարդիվովները (մախտաների  
 դեմ), Լուսնոսով—Մարտիկով («էկոնոմիստների» դեմ)— այս

բայրը վերցված են ուսու գրականութունից: Լենինն ու Ստալինն օգտագործում են Կոլեոլի առակները և այլն: Ահա՛ բաժնա է հիշել ծիաչն, որ այդ բայը օրբայները և տիպերը պետք է օգտագործվեն չափավոր, տեղին և ժամանակին: Չափազանցությունը կարող է դժվարացնել ազիտատորի հիմնական մասերի բժրանումը:

Մեր ազիտատորը և/ սրբապանդխտը ժողովրդական սակց-  
ծաղարծութուններում, ասածներում, առակներում, առասպել-  
ներէ մեջ, պատմական էքսկուրսիաներում կարող է դանել զեղեցիկ  
և օպարտորէ խոսքի ամենահոյակապ միջոցներ: Մեր հետադար  
պետք է յայնորեն դործադրի կարճ, դիտուկ ճշմարտութուն-  
ներ—ափորիզմներ, ժողովրդական առածներ, սրնցով այնքան  
հարուստ են Լենինի, Ստալինի, Կերոլի, Կայինի, Լիալիմովի  
Էրոյիներն ու Երկերը: Բերենք մի քանի ափորիզմներ և առածներ.  
«Գայլը գառան մորքով», «ագռավ սիրամարդի փետուրներով»,  
«նչ ձուկ է, ոչ միս», «գերմանական սպան կորիւն է ոչխարի  
առագ և ոչխար՝ կորիւնի առագ», «չկա չարիք առանց բա-  
րիքի», «խոսելն արծաթ է, լռելը՝ ոսկի»: Ահա մի շարք այլ  
օրինակներ. «պահպանիր հայրենիքդ աչքի յուշի պես», «հայ-  
րենի հողում մեռիր, բայց մի բողբոջ», «մարդն առանց հայ-  
րենիքի—տոխակ է առանց երգի», «ավելի լավ է պատվով մա-  
նք, քան անարգ կյանք», «ով մեզ մտա արով զա—նա սրից էլ  
կկործանվի» (Նեվսկի), «մի վախենա՛ մահվանից, վախեցե՛ք  
պարտութունից, որովհետեւ դա և՛ մահ է բերում, և՛ անարգու-  
թյուն» (Գ. Գոնկով), «հայրենի ծուխն սփելի լավ է, քան  
օտարութեան կրակը», «գեղ կանգնի—գերան կկոտրի», «ուսը  
սրի հետ կտաակ չի անում», «խիզախութունը հազարանակի կեն  
է», «ավելի լավ է մարդու աչքը դուրս գա, քան անունը»  
(վախկոտի դեմ), «ինչ որ չպիտի իմանա բշտամիդ, այն մի  
առա նաև քարեկամիդ», «ոչ միշտ առա այն, ինչ գիտես, բայց  
միշտ գիտցիր այն, ինչ ասում ես», «երեք բշտամին անճանապար  
չի ինում նրան ոչնչացնում եմ» (Մ. Գոբկի). «գեղեցիկ մահն  
ազնվացնում է մարդը կյանք», «երեք երկու խելով մարդ են  
խոսում, սպա կվերջացնեն չավարտված գործը: Երեք խոսեն  
երկու հիմարներ, սպա կփչացնեն արդեն ավարտվածը», «ծախ  
վախեցողը կորեկ չի ցանի», «գալլից վախեցողը անուտ չի  
զնա» և այլն և այլն:

Լենինն ու Ստալինը սակցծաղարծել են բազմաթիվ ափո-

բիզնէսներ, օրինակ. «մենք պետք է երկար պաշտպանենք մեզ և կայաշտպանենք», «հաղթանակն ինքնըստինքյան չի գտալիս, այն պետք է նվանել», «մասսաները սուր պայխաբոււմ ամենից շատ քան սովորեցին», «մեր գործն արդար է, հաղթանակը մերը կլինի», «մահ գերմանական օկուպանտներին»:

Էտի հետադին իր ճառի մէջ մերթնդմերթ մտցնում է ստակներ, կարճ հեքիաթներ, խմաստուն անեկզամներ, ժողովրդական սրամտութիւններ և այլն:

Սովետական ժողովուրդների հայրենական մեծ պատերազմն անասման հարուստ մատերիալ է տալիս բուշետիկ հետադին համար: Անհրաժեշտ է արդ ամբողջն օգտագործել մեր հայրենիքի սխերիմ ինչնամու՛ հիտլերյան Գերմանիայի դեմ: Այդ բոլոր մատերիալները անույխադրելով, հաղորդելիս սակայն պետք է միշտ հիշել «Պրոպագանդա» հետեյալ կարևոր խոսքերը.

«Սակայն նույնիսկ ամենահետաքրքիր մատերիալի սոսկ բնիկերցումը կարելի է վերածել միտպաղպղ և կազիաննի բնիկերցանության, եթէ մտայության ամենք կենդանի խոսքը, եթէ չօգտագործենք ժողովրդական խոսքի ամբողջ հարստութիւնը, նրա պատկերաւորութիւնը, խարակտերիստիկաների դիպուկութիւնը, սատիրիկական կատակը: Միայն այն սպիտատուրը և քաղցեկը կարող է ճանապարհ հարթել դեպի մարտիկի հողին, սի ժողովուրդից կընդօրինակի դիպուկ, արտահայտիչ, գունեղ լեզվի արժևարը»:

## Ի ՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է՝ ԼԻՆԻ ԱԳԻՏԱՏՈՐԻ ԼԵԶՈՒՆ

«Խոսքով մտտեր մարդկանց սրտերը» — այսպես է որոշել բանաստեղծի խնդիրը մեծ Պուշկինը: Այս վեհ մարտակոչը պետք է հանցեալներէ և մեր ազխատարներին, որոնք կոչված են վառելու մարդկանց սրտերը բոլշևիկյան ճշմարտության հրաշունջ խոսքով: Ազխատարի աշխատանքը պահանջում է ողեշնչում, ստեղծագործական հնարամտություն, բարձր վարպետություն: Մասնախորապես խոսքի մրա, ձևի մրա կատարվող աշխատանքը խկական ստեղծագործական աշխատանք է և ազխատարից չեզուրեմ խմանայու հետ միասին պահանջում է իդեական մեծ նպատակաւարացություն: Խոսքն ինքնանպատակ չէ, խոսքը մասաներին պատարակող, հանուն որոշ պատարներէ պայքարելու մտքիլղացիայի ենթարկող զենք է:

Մենք խոսքին հիանալիորեն տիրապետող բառական շատ ազխատարներ ունենք: Ոչ միայն ունկնդիրներէ միտքը, այլև զգացումն է սողորվում, այրվում ազխատարներէ՝ բոլշևիկյան ճշմարտության այդ բացաշունջ մունետիկներէ ճատերից:

Քո հասու խոսքը, ազխատար մարտիկ,  
 Մրահի մի ծայրից մյուսը անցով,  
 Ժողովրդի մեջ զղբիդ է նա հանում,  
 Քաղցր երգի նման սրտին է հասնում:  
 Նման է նա քո մարտական զենքին -  
 Եվ օղնում է լեզ, ո՛վ մարտիկ, կոպին:  
 Այդ խոսքն ունակ է վառել սովերին՝  
 Խոսքն այդ Լենինի, ճառն Մուսիլինի:

Այսպես է Ա. Տվարդովսկին բնորոշում ազխացիային և սպաս դրված ճշմարտացի ու կրքոտ խոսքի ուժը: Եվ իրոք, որ ազխատարի խոսքը պայքարի մի ահեղ զենք է:

Բայց արդյո՞ք բոլոր ազխատարներն են կատարելապես տիր-

բաղեւում ալլ զենքին: Աչ: Հաճախ աղիտատորները լեզուն աղ-  
քատ է, խոսքը՝ պարզությունից, պատկերաւորությունից  
զուրկ, հաճախ էլ մեղանշում է դժգոհապահան թերություննե-  
րով: Ընդլայնելով իրենց դադափարական-բարդաբախան տեսա-  
դաշար՝ աղիտատորները սկսեց է անխոնջ կերպով դարդացնեն ու  
հարստացնեն իրենց լեզուն

## ՀԱՆՈՒՆ ՄԱՔՈՒՐ ԵՎ ՃԻՇՏ ԼԵԶՎԻ

Մթանչելի, պատկերաւոր լեզու կերտող Ի. Ս. Տուրգենևը  
կրիտասարգ գրականադեաններին ուղղած իր կատիւմ գրել է.

«... Պահպանեցեք մեր լեզուն, մեր հիասքանչ ուսու լեզուն,  
այլ դանձը, այլ հարստությունը, որ հանձնել են մեզ մեր նա-  
խորդները, որոնց մեջ փայլում է Պուշկինը:— Հարգանքով վե-  
րաբերվեցեք այլ հզոր զենքին. հմուտ մարդկանց ձեռքին նա  
ընդունակ է հրաշքն՝ որ գործելը»:

Այս սողերը գրելու օրվանից շատ տասնամյակներ են ան-  
ցել, բայց դրանք մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց ակաուալ  
նշանակությունը:

Ռուս լեզվի մաքրության համար կոչում էր Վլադիմիր Իլլիչ  
Լենինը: «Ռուսաց լեզվի դաման համար» վերնադիրը կրող զի-  
տոգության մեջ, որ ունի «Աղաւ պահի խորհրդամտություններ,  
այսինքն ժողովում ճառեր լսելիս» բնորոշ ենթափերնագիրը,  
Լենինը կոչ է արել աղիտատորներին ու սրբոպաշտաններին  
խոսել ժողովրդին մասշելի լեզվով, վճռականապես զեն զցկելով  
օտար տերմինների և անձխո բառերի ծանր հրեամանին.

«Մենք փշայնում ենք ուսաց լեզուն: Օտար բառերը դործ  
ենք անում առանց կարիքի: Միայլ ենք դործ անում գրանք: Ին-  
չո՞ւ սակ «գեկֆեկաներ», երբ կարելի է սակ պակասություններ  
կամ թերություններ, կամ թե բացեր»:

Լենինյան ավանդն իր ամբողջ խորը նշանակությամբ շատ  
աղիտատորներ զեւ չեն բմբանել: Նրանք բաղական հոգատարու-  
թյամբ չեն վերաբերվում բառին:

«Այլ հարցը սկսեց է համաձայնեցնել և, իհարկե կատակ-  
ցել», — հեղինում է Մաշակովսիին նրանց, ովքեր սառը, դրա-  
սենյակային «ելից» և «մախց»-ի անհոյել լեզուն դերագատում են  
կենդանի լեզվից:

«Ներք ստում են «գեկանմբեր», այդ ավելայնում են ամխ  
շառը, կարծեւ թե գեկանմբերը կարող է լինել ոչ թե ամխ,

այլ ազատի: Կամ թե՛ «մի ամբողջ շաբաթ հեռադրներ», կարծես թե կես շաբաթ էլ է լինում»: Այս տողերի հեղինակ Մ. Ս. Օլմենսկին քննադատել է մեր մի քանի թերթերի լեզուն: Բայց նրա արդարացի դիտարկումները կարող են վերաբերվել և մեր շատ ազխատորների լեզվին:

Մեր լեզուն չեն դարձարում և այնպիսի անասչ բառեր, ինչպես «проработка», «недодача», «недопонимание», «на сегодняшний день», «в общем и целом», «в части данного вопроса», «на все сто процентов»: Միայն պետք է ավելացնել մի շաբաթ կոչում բառեր, որ դարձ ենք անում հասի սովորութիամբ («значит», «так сказать», «видите ли», «понимаете ли» և այլն, և այլն):

Մ. Մ. Կիրովն իր ճառերից մեկում բերում է հեռադրի անմիա ստեղծագործության մի նմուշ, մի հեռադր, որ աշխատահարում էր ճառում ու փրուն լեզվով.

«Ես չեմ եմ, թե ինչպես պարտալի մի շրջկամի քարտուղար յայտնի ճառ էր ասում. «Երևելով ընդհանուր դրութչունից, ընտանի պահանջները կարգակցութիամբ, հիմնական օգակը մեզ մոտ պետք է խորձերի գեղումը լինի...»:

Մե՛ծ բան է պարզութիւնը: Բայց պարզը և դեհճիկը նույն բաները չեն: Այնպիսի պարզութիւն կա, որ դողութիւնից էլ վատ է» — ասում է ժողովրդական ասածը: Գծարտաարար շատերը պարզութիւն պահանջը հանդեցնում են կոպտացման, դեհճիկ սխալոցի: Այդպիսի մարդիկ խիտ հիշեցնում են Մալեյի «Յուզ անկյունի մարդիկ» վեպի հերոսին:

«Տրտտուր ասածդ մեր լեզվով նշանակում է «քարշակ», — աչգպես սկսեց նա դար: Այ, ուրեմն, միջևե ուր են ճխովել մարդիկ, միջև ինչպիսի՛ դարհուրիկ մեխանիկայի: — Նա ստալին անդամն էր դառ ստալիս և որպես քաղաքի բնակիչ՝ հաստարար կարծում էր, որ աչգպիսի ունկնդիրներին պետք է ավելի դեղճկական, հյութալի բառերով սովորեցնել»:

Ավելի վատ բան է ստացում, երբ ազխատորը հարձարվելով ասանձին ունկնդիրների կուլտուրական հետամնացութիւնը՝ համեմում է իր ճառը կողմ, դեհճիկ բառիկներով: Մաքսիմ Գորկին ամենայն խառութիամբ դատապարտում էր լեզվական նման պոչականութիւնը: Նա կոպում էր պարզ, հասակ, պատկերավոր, միջխոններին մասշէլի, իրոք ժողովրդական լեզվի համար: «Մարքութիւն համար, խմատի ճշգրտութիւն հա-

մար, լեզվի սրութեան համար մղված պայքարը՝ պայքար է կուրսուբայի դեմքի համար: Արքան ավելի սուր է ուղղ. դեմքը, որքան ավելի ճիշտ է ուղղված՝ այնքան ավելի հաղթական է»<sup>\*)</sup>:

#### ՊԱՏՐԱՍՏԻ ՖԻԼԱՋՆԵՐՈՎ, ՄԻՆԻՍԵՐ

Շատ ազխատորների հասերի լուրջ արտադր պատրաստի Ֆրազների և ունկնդիրների ոչ սրտին, ոչ մաքին ոչինչ շատու պայտե կոչված ընդհանուր տեղերի ստատիստիկան է: «Իսկ գրեթե, թե ինչ է նշանակում խոսել պատրաստի Ֆրազներով», — հարցնում է Մ. Ի. Կայինինը և անմիջապես պատասխանում. «Այդ նշանակում է, որ ձեր միտքը չի աշխատում, այլ միայն լեզուն է աշխատում»:

Պատրաստի Ֆրազների մարմաձր միշտ չէ, որ բղխում է լեզուի սրտին ազգատ կամ սահմանափակ լինելուց: Եթե ազխատորներն ավելի շատ կլինին կենդանի իրականութեանից, Կրնկրեա օրինակներին՝ ապա իրենց կյույթները կհարողանային՝ լեզվի տեսակետից ավելի հարուստ ու արտահայտիչ գարձեղ: Կանհետանար լեզվի կաշկանդվածութունը, գրասենյակայնութունը, խեղճութունը: Խոսքը կհնչեր պարզ ու համոզիչ:

Մի գործարանում մեզ մի՞նչ փեմակից լսել ազխատորի գրույցը մի հրատապ քաղաքական թեմայի մասին: Տասնչինգ բույն տեսող գրույցը լի էր պատրաստի, թեթեթեթից վերցված Ֆրազներով: աշխույժ, հուզիչ գրույց չտապակեց. գրացվում էր, որ ունկնդիրները բավարարված չեն: Իսկ աչքովեա եղամ այն պատճառով, որ ազխատորը նեղութեան չկրեց գրույցի համար ընտրելու վատ, կենդանի փաստեր, որոնք տողորկին սուղխորին:

Մեր առջևն է Բ. Գորբատովի պատմվածքը, որ գրված է «Լամակներ ընկերոջ»-ի ձևով: Այդ պատմվածքը թե՛ ջրմանդակութեամբ, թե՛ ձևով միօրինակ է, թե ինչպես, պետք է քզխատացեա անկ ապագիր խոսքով:

Մրաճառը սուղաց «այն ավից» եկած մի մարդ. դերմանացիներից էր նա փախել: Սուղաց ուսած սանկրով, պատաստված, արյունոտ արմանկներով: Մերոնց տեսնելով՝ չկարողացավ գույել իրեն և լաց եղամ:

\*) М. Горький. „О литературе“, 1937, стр. 147.

«Անէր այլնէր նրան մեր հացը, մեր խաղաճարպը. մեր ծխախոտը: Ե՛վ էրը ալը մարդը կշտացայ ու հանդատացայ, պատմեց զերմանացիներէ մասին. բռնութիւններէ, խռատան- զուսներէ, կողպուտներէ մասին: Ե՛վ աբլուներ հալ սկսեց նրան լսող մարտիկներէ մեջ, և սիրան սկսեց թե՛ բարտել:

Իսկ ես նալում էի ալը մարդու կոնակին: Միայն կոնակին: Եսայում էի անխարթ: Այլ կոնակն ամեն մի պատմվածքից ալեւիլ անալոր էր:

Ընդամենը մեկուկես ամիս էր ալը մարդն ապրել զերմանա- ցիներէ իշխանութեան տակ, և նրա մեջքը կուացել էր: Կարծես նրա ողնայունը ջարդել էին: Կարծես մեկուկես ամիս շարունակ ման էր եկել խոնարհվելով, ծովելով, հարված սպասելուց ամ- բողջ մեջքով ցնցվելով: Դա զերութեան մեջ եղած մարդու կը- նակ էր: Դա սարուկի կոնակ էր:

— Ուղղվե՛ր, — ուզում էի դոտալ:— Է՛յ, բա՛ց արա ուսե- րը, բնկե՛ր, հարազատներիդ հետ ես դու:

Ահա թե ինչպես տեսա ես՝ ստալիշապույն հասակութեամբ տեսա, թե ինչ է ինձ բերում զերմանացին — կյանք ջարդված, կուացած մեջքով»:

Սարուկ մարդու կուացած մեջք — ահա մի մանրամասնու- թեան, որ դիտողունակ դրողի աչքին է գարնվել: Ե՛վ այս ման- բամանութեանը խորապես դրոշմվում է մեր սրբում, ստիպում է շատ բաների մասին մտածել:

Ազխատարները պետք է կենն կոնկրետ օրինակներից: Դա կողմի ընդհանուր լեզու դանելու ասելիտարթայի հետ: Կանհե- տանա լեզվական անդորութեանը: Պատրաստի Քրաղներէ և մերկ կրէրի փոխարեն երեւան կյան սովետական մարդու դայրույթն ու ցատմը հրահրող խեղական անվեհեր խոսքեր:

## ՀՍՍՏԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ ԼՍՎ, ՈՃԻ ՀՍՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

«Ես ոչ մի բան այնպես չէի ցանկանա, ոչ մի բանի մասին այնքան շատ չէի երազի, որքան բանփորներէ համար գրելու հնարափորութեան մասին»\*) — ասում է Վլադիմիր Իլյիչն իր նամակներից մեկում:

\*) Ленин. Соч. т. XXVIII, стр. 17.

Լենինյով դանձկացման, կոպտացման, «ստիպոյն» թշնամի՝  
Լենինը ձգտում էր շարադրել պարզ, միջոտներին հասկանալի  
ձևով: Երբ Լենինն արտասահմանում գրում էր «Վյուդական շա-  
վորության» իր բրտշուրը, — այդ նա յարմիրս մեռն-  
թերցում էր այն, ստուգման տայիս ուսն էմիգրանտ բանվորնե-  
րին, ուղղում շարվածքի վրա և շհանդատացավ այնքան ժամա-  
նակ, մինչև որ համաղկեց, որ բրտշուրը պրված է իրոք պարզ,  
հստակ, պատկերավոր լեզվով: Այդ բրտշուրի պարզությունը  
հանձարեկ պարզություն է: Լենինին հարկավոր է բացատրել,  
թե ի՞նչ է «պրոտարը», և նա գրում է.

«Այնպիսի բանվորները, որոնք ոչ հող ունեն, ոչ արհեստա-  
նոց, որոնք ոչ կյանքում վարձով աշխատում են օտար մարդ-  
կանց մոտ, — աջպիսի բանվորներին ամբողջ Միքրոպայում սն-  
վանում են պ ր ո ս լ ե տ ա ր ն ե ր»):

Վյուդացիության համար դրված Լենինի այդ բրտշուրը  
բազմաթիվ ժողովրդական արասահայտություններ, առանձնեք ու  
առանցվածքներ է պարունակում:

«Այդպես էլ ապրում է միջակ դյուդացին — ոչ ձուկ է, ոչ  
թռչուն: Աչ կարողանում է խկական, ճամարիս անտեսաաեք  
լինել, ոչ էլ բանվոր»):

Արհամարհանքը ճատմարանության և կեղծ «գեղեկչության»  
նկատմամբ — բնորոշ է Լենինի բոլոր ելույթներին: Շատ հաճախ  
է նա խարազանել կեղծ-գիտնական խժղմարանությունը, անձիս  
վերջությունը:

«Իս հասկալի դիտնականորեն» է հնչում, բայց իրականում  
ամենագտարիլ բաասխաղություն է», — գրում է Լենինը Ստրու-  
վիի մասին՝ «Սոցիալիզմի ևս մի ոչնչացում» հոդվածում: Մի  
խճողված ցիտատի առթիվ Լենինը նկատում է. «Լեզուն ախպե  
է խճճված, ինչպես այն թեթի կծիկը, որի հետ փրիկիլը վաղուց  
խաղ է արել»:

Լենինյան ոճի առանձնահատկությունները դիպուկ կերպով  
բնութագրել է ընկեր Ստալինը հետևյալ խոսքերում.

«Համոզման արտահարդ ուժը, փառասրկման պարզությունն  
ու հասակությունը, կարճ ու ամենքին հասկանալի Ֆրազները,  
ցուցադրվելու բացակայությունը, սպավորություն գործնկու

\*) Ленин. Соч. т. V. стр. 270.

\*\*) նույն տեղում էջ 284:

Նպաստակ ունեցող գլխաւորութեան ժեստերի ու էֆեկտաւոր Ֆրայ-նեքի բացահայտութեանը, — այս ամենը նպաստաւոր կերպով տարբերում էր Լենինի ճառերը սովորական «պարամենտալին» հանարներէի ճառերէց»:

Եւ չոր վերաբերում է և ընկեր Ստալինի ճառերին: Ձեռք, մաքսայր լեզուն, բարձեւութեանը, վեհ պարզութեանը, հիանալի պատկերաւորութեանը, բարձր սկզբունքայնութեանը և գաղափարայնութեանը ընտրում է նրա էլուցիւնների ոճը:

Ընկեր Ստալինն ուղեղն է խոսում, որ բառերի սեղը նեղ-փածք լինի, խոյ մաքրի ակզր՝ լայն: «Հասար փորձեցե՛ք, — սասում է Մ. Ի. Կալինինը, — ամէլի կարճ շարադրել Ստալինի սասած որեւէ միտքը»:

Լենինից ու Ստալինից այխատարները սովորում են բուշե-փիկյան այխատայի զարպետութեան, յեզվի հասակութեան, սեղմութեան ու պարզութեան: Այդ պարզութեանը շի ժխտում ոչ չեղլի հարատեւութեանը, ոչ էլ մանավանդ պատկերաւորութեանը: Եւ ամենից սասմ հիմնում է միլիոնների ըմբռնմանը մասշտաբի բառերի հասար ընտրութեան մբա:

Ճշգրիտ ու ուղիղ բառապարձածումը պահանջում է գրապի-տութեան ու քաղաքական յարտարտութեան բարձր մտկարգակ: Պեռք է յ ս օ փ ւ մ ա ն ս ս ա յ ն, ի ն շ ի մասին խոսում եւ: Պեռք է կարողանալ պարզ ու հասակ մ ա ս ւ ծ ե յ»:

«Քնչքան գրողն իր միտքը պարզ պատկերացնի՝

Այնքան նուրբ ու հասակ էր այն կարտահայտի:

Շարադրելը գծիմար չէ խոսք ըմբռնումին,

Բառերն այնժամ մի փնտտեք, նրանք ինքնին կհասին»:

(Բուպո)

Եւ չն բանն է սասում իր նամակներում և Ֆրանսիացի հայանի գրող Գ. Ֆլորերը. «Քնչքան արմեշեցի է միտքը, այնքան հնչեց է Ֆրայքը, մասմ հ եղեք: Մաքի որոշութեանը սասմ է բերում, — և ինքնին է, — խոսքի որոշութեան: Եթէ ճշգրտորեն գրակեք, թե ինչ էք ուզում սակո՞ յով էլ կասեք»: Այս ճշմարտութեանը կի-րառելի է ոչ միայն արկեստի երկերի համար, որ նկատի է ու-նեցեչ մեծ գրողը, գա ամբողջովին կիրառելի է նաև բանավոր խոսքի համար:

#### ՎԱՌ ՊԱՏԿԵՐՆԵՐ Ի ՍՊԱՍ ԱԳԻՏԱՅԻԱՅԻՆ

Ընդունում է կարճել, որ պատկերաւորութեանը բանա-սասեղմների ու գրողների «մենաշնորհն» է: Այդ խորապէս մուռ-

բություն է : Պատկերազարություն կա հաճախ գրասեան, փոխ-  
տափաշական ու քաղաքական բովանդակություն ունեցող երկե-  
րում : Գերցնիի, Բեյլինսկու, Դոբրոյտարովի հրատարակարանու-  
թյունը լեցուն է հարուստ պատկերազարության օրինակներով-  
յա իսկական գ ե գ ա ս ր զ ե ս ա ա կ ա ն հրատարակարան-  
ություն է :

Գեղարվեստականության պաթոսով են համակիւած Մարքսի  
երկերը : Նրա շանթոյ էսթետիկները, շողջազուն պատկերները,  
շարադրության գրամատիոցայի պրիմները, ոճի հասուկու-  
թյունն ու ձևակերպումները հզկիւածությունը, խոր տեմպերա-  
մենտայնությունը և հզոր պաթոսը — Մարքսի ոճի ար բոյր  
առանձնահատկություններն աճել են նրա ողջ էությունը կյանած  
կրքաւ ու անհաշու սեռչալցիւն պաշքարի հոյե վրա :

Լենինի և Ստալինի աշխատությունների էջերը հաճախ հա-  
զեցած են պատկերազարությամբ, որը շարադրությանը տալիս  
է աշխուժություն և արտահայտչություն : Ուժ հայտնի է, թե  
ինչպիսի փաշտեալությամբ են օգտագործում Լենինն ու Ստալինը  
կրտսի գրականության օրբոցները, Կոխովի, Շչեդրինի, Գոլո-  
ւի, Չեխովի երկերը : Բնութագրելով բուժութեան հասարա-  
կության դաշի օրենքները, կապիտալիզմի օրոք աշխատատիրե-  
րին պիշտախի կերպով շահագործելու մեթոդներ՝ Լենինը հե-  
վում է Կոխովի՝ «Աշուժը որս անելիս» հայտնի առակի վրա :

«Արտածածյա աշխատանքի մասին եղած ալք բոյր կանոն-  
ները միասին վերցրած՝ գործանալի կերպով հիշեցնում են  
հաշտնի ստակը, թե ինչպե՛ս աշուժը «համարապե՛ս» բաժա-  
նում էր որսը իր օրոնկերների միջև — առաջին մասը նա իրեն  
է վերցնում իրախումբով. երկրորդ մասը նրա համար, որ ինքը  
դադանների արքան է. երրորդ մասը նրա համար, որ ամենից  
ուժեղն է. իսկ շարբորդին ով թախ պարզի՝ աեղից շի վեր կենա  
կենդանի»<sup>\*)</sup> :

Լենինն ու Ստալինը չեն սահմանափակիւում մեծ կրտսիկների  
երկերից վերջում օրինակներն ու պատկերներն օգտագործելով :  
Գեղարվեստականությունը նրանց ոճին հատուկ է իրի օրգանա-  
